ԷՋԵՐ ՀԱՄՇԵՆԱՀԱՅԵՐԻ XVII—XVIII ԴԱՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Բ. Դ. ԹՈՌԼԱՔՅԱՆ (Սոչի)

Գոյություն ունեցող գրավոր աղբյուրները վկայում են, որ Համշենահայերի բռնի մահմեդականացման պրոցեսը բուն Համշեն գավառում սկսվել է XVII դ. 30-ական թթ. հետո, իսկ Սյուրմենե գավառակում (Սև գետ, Կարա Դերե)՝ XVIII դ. սկզբներից (1710—1715 թթ.)։ Հ. Տաշյանը հաղորդում է, որ երբ Կարապետ Ջուղայեցին Խաչեքարաց գավառում գրում էր «Սաղմոսարանը» (1630 թ.), բնակչությունը դեռևս քրիստոնյա էր, և որ դրանից հետո «Համշենի հայերը բռնադասված են նաև զանգվածային կերպով մահմեդական կրոնքն ընդունելու։ ԺԷ դարու վերջերը սկսած, ավելի ևս ԺԸ դարուն ընթացքին մեջ, տիրող եղած է մահմեդականությունը»[1]։

XVIII դ. 50—60-ական թթ. սկսած Համշենահայերի մահմեդականություն ընդունելու բռնադատված լինելը հաստատվում է նոր գաղթավայրերում Համշենահայերի հիմնվելու ժամանակամիջոցի մասին եղած վկայություններով։ Այսպես, Մ. Բժշկյանը 1817—1819 թթ. Պոնտոսի գավառներում կատարած շրջագայության մասին գրած իր գրքում, Խուռշունլիի (Կուրշումլի, Ջարշամպա գավառակ) հայերի մասին հաղորդում է. «Խուռշունլի ավան մոտ է Ջարշամպայի, բնակիչներն հայ Համշենու եկած և ամենքը զինվոր գրված են որդվոց որդի և ունեն զորապետ իշխան, որ զիրենք կկառավարե, մարդե ահ չունին. միայն Տերեպեիին հետ պատերազմ կերթան, և զորավոր մարդիկ են»[2]։ Ուրեմն Համշենահայերի զգալի մի հատված այստեղ հիմնվել էր Բժշկյանի շրջագայությունից շատ տարիներ առաջ, որ կարողացել էր տնտեսապես ապահով ու մարտունակ համայնք կազմել։

Համշենահայերի մի ուրիշ գաղթավայրի՝ Մալայի շրջանի վերաբերյալ վավերական տեղեկություններ է հայտնում Ս. Հայկունին, որը Մալա գյուղը այցելել է 1858—1859 թթ.։ «Ավանդությամբ գիտենք, որ երկու դար առաջ այդտեղ հայեր կային։ Իմ պապու հայրը (Ղազար) Մալայեն Տրապիզոն եկած՝ հացագործ եղած է»[3],— գրում է Ս. Հայկունին։ Նրա այս խոսքերից հետևում է, որ մալյեցիների նախահայրերը Համշենից գաղթել էին շուրջ 1655—1665 թթ.։ Ապա Հայկունին շարունակում է. «Մալացիք 1730—60 թվականներուն բոլորովին ապահով կյանք վարած են, շնորհիվ իրենց կտրիճ երիտասարդներուն և խոհեմ կառավարիչներուն»[4]։ Հետևապես այս փաստն էլ է վկայում, որ մալայեցիք այդ վայրերում բնակություն էին հաստատել 1730 թ. տասնյակ տարիներ առաջ, մանավանդ որ Հայկունին նաև գրում է. «Համշենի լեռների արևմտյան երեսից հյուսիս կհոսի Սև գետ (Գարատերե) ասված

---

1 Հ. Տաշյան, Հայ բնակչությունը Սև ծովեն մինչև Կարին, Վիեննա, 1921, էջ 30։

2 Մ. Բժշկյան, Պատմություն Պոնտոսի, Վենետիկ, 1819, էջ 49, 82։

3 Ս. Հայկունի, Հուսեփոյի ազգատոհմ և տարօրինակ ավաղակ Աբրիյոմ, Վաղարշապատ, 1905, էջ 9։

4 Նույն տեղում, էջ 10։

մեծ ու պատմական գետը, սորա հովտի ամբողջ տարածությունը Սև գետ և ըստ ժողովրդի՝ Սև գետացիք կասվին, որ համշենցոց պես հայերեն կխոսին, և 1708—10 թվականներուն թուրքացած են կրոնամոլ մոլլաներու և ենիչերիներու ճնշման ներքև»[5]։

Ս. Հայկունին բերում է ուրիշ փաստեր ևս։ Իր «Հուսեփոյի ազգատոհմ և տարօրինակ ավազակ Աբրիյոմ» գրքի իրական հերոսի՝ Աբրիյոմի, ազգատոհմի ժամանակագրությունը մանրամասն թվարկելով, նա նշում է, որ Աբրիյոմը ծնվել էր 1795—1800 թթ., իսկ նրա պապի պապը՝ Օվանեսը, փրկվել էր Մալայի կոտորածից ու փախչելով Կալաֆկայի անտառները, 5—6 տարի միայնակ նախամարդու կյանք է վարել, մինչև որ նրան հանդիպել են Սև գետից փախած ու Կալաֆկայում ապաստանած հայերը[6]։ Քանի որ Աբրիյոմը ծնվել էր 1795—1800 թթ., նրա պապի պապը, որը նրանից առնվազն 80—100 տարով մեծ կլիներ, կարող էր Կալաֆկա հասած լինել 1715—1720 թթ. ոչ ուշ։ Իսկ բուն Համշեն գավառից համշենցիների զանգվածային փախուստը դեպի Սև գետ—Սամսոն սկսվել էր մոտավորապես 1650—1660 թթ.։

Համշենահայերին բարբարոս միջոցներով մահմեդականացնելու պրոցեսի 1800-ական թթ. շատ տարիներ առաջ սկսված լինելը հաստատվում է ուրիշ հեղինակավոր վկայություններով ևս։

1800-ական թթ. հայրենի երկրում (Համշենում) մնացած հայերի մեծ մասն արդեն կես մահմեդական էին և կես քրիստոնյա։ Այդ դրության ականատես Ղ. Ինճիճյանը հաղորդում է. «Իրավիճակն այն էր, որ մեծամասնությունը արդեն մահմեդական եղած էր, բայց կային տակավին քրիստոնյա ալ... Բնական է, որ բոնի նորադարձներեն դոնե ոմանք կես-կես են հավատքով, արտաքուստ միայն ցուցանելով զտաճկություն»[7]։

Նույն դրությունը տիրում էր նաև Մ. Բժշկյանի շրջագայության տարիներին՝ 1817—1819 թթ.[8]։ Ավելի ուշ, 1843 թ., Կարլ Կոխը իր շրջագայության ժամանակ, Բիսկից Սպեր անցնելիս, ճեմիլ գյուղում հյուր է լինում մի համշենցու տանը, որը, ինչպես Կոխն է գրում, «բնականապես շատունց մահմեդականացած էր, սակայն անոր տիպարն այնպես բնորոշ հայկական կգտնվեր, որ թերևս գլխավորաբար հայ արյուն կհոսեր երակներուն մեջ»[9]։ Ս. Հայկունին, որ 1870-ական թթ. այցելել է Սև գետի (Սյուրմենեի) համշենահայ գյուղերը, գրում է. «1840-ական թվերին Համշենում դեռ իրենց ազգային գոյությունը պահել էին 20—30 ընտանիքներ, որոնց սպասարկելու համար Համշեն էր հաճախում Սյուրմենեի ազգասեր քահանա տ. Կարապետ։ Նա բարեկամացավ Համշենու բեկերի հետ, արտոնություն առավ մեծ բեկից (Համշենցի մահմեդական դարձած իշխանաց իշխան—Բ. Թ.), որ տարին մի կամ երկու անգամ Համշեն գնա, նույն տեղ դեռ հայտնի 20—30 տունի չափ հայերուն կրոնական արարողություն կատարե»[10]։

---

5 Ս. Հայկունի, Կորած ու մոռացված հայեր, «Արարատ», 1895, № 7—8, էջ 239։

6 Ս. Հայկունի, Հուսեփոյի ազգատոհմ..., էջ 21—25։

7 Ղ. Ինճիճյան, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, մասն Ա, Վենետիկ, 1806, էջ 395—398։

8 Մ. Բժշկյան, նշվ. աշխ., էջ 96—97։

9 Տե՛ս Հ. Տաշյան, նշվ. աշխ., էջ 27։

10 «Արարատ», 1895, № 7—8, էջ 239—243, 293—297։

XVII դ. վերջերին և XVIII դ. սկզբներին թուրք ասիմիլյատորները իրենց ծրագիրը Համշենում հիմնականում վերջացրած համարելով, շարունակում են բռնի մահմեդականացման պրոցեսը Սյուրմենե գավառակում, Սև գետի ու Աղրիդի հայերի նկատմամբ, որոնք Համշենից հետո թվով երկրորդ տեղն էին բռնում Տրապիզոնի նահանգի գյուղական վայրերում։ Թուրքերի գործադրած բարբարոսությունների մասին առաջին ու հավաստի վկայությունները գրի է առել Ս. Հայկունին, որը 1867—1868 և 1878 թթ. հատուկ ուղևորություն է կատարել Համշեն ու Սյուրմենե գավառները։ Նա այցելել է Սև ու Ցամբոլի գետերի շրջակայքում բնակվող մի շարք մահմեդականացած հայերի գյուղերը և իր հավաքած հավաստի տեղեկությունները պարբերաբար հրատարակել է «Արարատ» ամսագրի 1895 թ. 7—8 համարներում՝ «Կորած ու մոռացված հայեր» խորագրով։

XIX դ. 70-ական թթ. պոնտահայության կյանքի մասին Պ. Թումայանի՝ Պոլսո պատրիարքին (Խրիմյան Հայրիկին) ներկայացրած զեկուցագրում հակիրճ տեղեկություններ կան նաև Համշենի ու հատկապես Սև գետի հայերի հարկադրական մահմեդականացման ժամանակաշրջանի մասին, որոնք որոշ չափով լրացնելով Հայկունու տվյալները, հաստատում են նրա վկայությունները։ Պ. Թումայանը իր զեկուցագրում Սև գետի անցքերի մասին գրում է. «Ինչպես կըստուգվի Ուղի Սամերա գյուղի Տ. Հովակիմ քահանայի քով գտնված հին հիշատակարանի մը մեջ գրված հիշատակարանեն՝ Գարա Տերեյի ամբողջ տաճկանալը և վերջին մաս մը մնացողներու սպանվել և փախչելը՝ հայոց ՌՄԻԹ (1780) թվին պատահեր է, սակայն հալածումը շատ առաջ սկսեր է և ոտք ոտքի հառաջացեր ու տաճկացող հայոց ձեռքով այլ շատ անօրենություններ ըլլալե հետո՝ վերոհիշյալ թվականին Գարատերեյի վերին ծայրը խաղաղ գյուղը վերջացեր է»[11]։ Պ. Թումայանի այս վկայությունը նույնպես հաստատում է, որ Սև գետի արյունալի դեպքերը 1780 թ. շատ տարիներ առաջ են սկսվել։

Հիշված զեկուցագրում խոսելով Տրապիզոնի մոտակա գյուղերի հայերի մասին, Պ. Թումայանը նաև գրում է. «Տրապիզոնի շինականաց արդի գաղթականությունը գրեթե ասկե դար ու կես առաջ Գարա Տերեյեն հոն եկած է»[12]։ Զեկուցագիրը գրվել է 1870-ական թթ., ուրեմն հենց ինքը՝ Պ. Թումայանը, հաստատում է, որ Սև գետից հայերի բռնի մահմեդականացումն ու հիմնական գաղթը տեղի են ունեցել 1710—1720 թվականներից սկսած։ Հ. Տաշյանը վկայում է Սև գետի զարհուրելի անցքերի 1708—1710 թթ. կատարվելը[13]։ Նույնն է ասում նաև Հ. Աճառյանը. «1715 թվին տկսվում է Կարա-Դերեյի և Սյուրմենեի հայոց կոտորածը, որի նման դառն աղետ քիչ է տեսնըված»[14]։

Չնայած այս բոլոր վկայություններին, Պ. Թումայանի հիշյալ զեկուցագրում տեղ գտած հետևյալ հատվածը առիթ է տվել սխալ եզրակացության

---

11 Տե՛ս «Լումա», Բ գիրք, 1899, էջ 144։ Հիշյալ Խաղաղ գյուղի որտեղ լինելը ստուգել հնարավոր չեղավ։ Սյուրմենեի նախկին բնակիչներ Արութ Քյահյանի (ծն. 1884 թ.), Մինաս Մինասյանի և այլոց վկայությամբ Սև գետի հովտում Խաղաղ անունով գյուղ չի եղել. Սև գետի ամենահեռավոր գյուղերը Թորոսլին ու Այվենն էին։

12 Տե՛ս նույն տեղում, էջ 174։

13 Հ. Տաշյան, նշվ. աշխ., էջ 34։

14 Հ. Աճառյան, Քննություն Համշենի բարբառի, Երևան, 1947, էջ 5։

հանգելու[15]։ Պ. Թումայանը գրել է. «Հայոց որ գարու հոն (Սև գետ—Բ. Թ.) գաղթած ըլլալը որոշ չի գիտցվիր, սակայն երկու կողմերե ու երկու պատճառով եկած կերևի այս ժողովուրդը։ Առաջինը Սպեր ու Բաբերդ դաշտերու Թորոսանցու կողմով, կամ բռնությամբ ու հարստահարությամբ փախչելով և կամ Տերեպեյիներու երկրագործության կամ անոնց թշնամաց դեմ պատերազմելու հրավերով, և երկրորդը Համշեն մեծ գավառեն փախչելով հատուկ կրոնափոխութենե ազատվելու նպատակով, ատկե գրեթե 170—180 տարի առաջ»[16]։

Այստեղ ակներև է, որ Պ. Թումայանը տեղյակ չի եղել, որ Սյուրմենեն հայաբնակ է եղել դեռևս թուրքերի այդ վայրերը գավթելուց շատ դարեր առաջ։ Նա նույնիսկ ծանոթ չի եղել իր ժամանակակից Ս. Հայկունու լիարժեք այն վկայություններին, թե մինչև Համշենում կատարված վայրագությունների ազդեցությամբ հայերի մի մասի Սև գետում ապաստանելը այնտեղ ապրում էին շուրջ 6000 տուն հայեր։ Համազասպ Ոսկյանի վկայությամբ դեռևս X—XII դարերում Տրապիզոնի նահանգում գործող հայկական 13 վանքերից մեկը՝ Ս. Վարդան կամ Վարդանանց անունով, գտնվում էր Սուրմենեում[17]։

Սխալ է Թումայանի այն կարծիքը, թե XVII դարում Համշենից փախած հայերն են վերաբնակվել Սյուրմենեում ու որոշ ժամանակ անց ենթարկվել բռնի կրոնափոխության կամ թե նրանք կազմել են Սև գետի հայ բնակչության մեծամասնությունը։

Ճիշտ չէ նաև Համշենի գավառից կրոնափոխությունից ազատվելու նպատակով փախչող հայերի մասին Պ. Թումայանի հայտնած այն կարծիքը, թե դա տեղի է ունեցել «գրեթե 170—180 տարի առաջ», այսինքն՝ 1690—1700 թթ.։

Բերված փաստերը վկայում են, որ Համշենահայերի բռնի մահմեդականացումը բուն Համշեն գավառում սկսվել է 1650—1660-ական թթ., իսկ Սև գետում (Սյուրմենե)՝ 1710—1715 թթ. ու շարունակվել XVIII դ. ընթացքում։ Համշենահայերի հանդեպ հալածանքը չդադարեց նաև ամբողջ XIX դարում, իր գագաթնակետին հասնելով 1895—1896 և 1915 թթ.։

СТРАНИЦЫ ИЗ ИСТОРИИ ХАМШЕНСКИХ АРМЯН В XVII—XVIII вв.

Б. Г. ТОРЛАКЯН (Сочи)

(Резюме)

Анализируя сведения, содержащиеся в работах ряда исследователей, а также путешественников, посетивших область Хамшен в XIX в. и начале XX в. (К. Кох, Г. Инджиджян, Л. Бжшкян, П. Тумаян, А. Ташьян, Гр. Ачарян), мы считаем, что насильственное обращение хамшенских армян в магометанскую веру в собственно Хамшенском районе началось во II половине XVII в. (ок. 1650 г.), а в Сурмененском районе (Севгет, Кара-дере)—в начале XVIII в. (ок. 1710—1715 гг.).

15 Տե՛ս «Բանբեր Երևանի համալսարանի», 1969, N 2, էջ 136—137։

16 Տե՛ս «Լումա», Բ գիրք, 1899, էջ 175։

17 Տե՛ս Հ. Ոսկյան, Սեբաստիա, Խարբերդի, Դիարբեքիրի և Տրապիզոնի վանքերը, Վիեննա, 1962։